Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՌԻԹՈՎ

«Չի յաղթեցէք դուք չարին»
(Ա Յովհ. Բ 13)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց.

85 տարիներ են անցել ողբերգական այն օրերից, երբ Օսմանյան Թուրքիան, օգտըվելով Առաջին աշխարհամարտի պատեհությունից, Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաշատ վայրերում իրականացրեց հայաջնջման իր հրեշավոր ծրագիրը:

Մեր ժողովուրդը բազմադարյա իր կենսագրության մեջ շատ ու շատ է աղետահարվել ու կորուստներ կրել, բայց առանձնակի ցավ են պատճառել ու քաներորդ՝ լուսավորյալ համարվող դարերում թուրքական կառավարության մշակած և սառնասրտորեն իրականացրած ջարդերը, որ ուղղված էին «Հայկական հարցի» «լուծմանը»՝ **չկա հայություն, չկա հայկական հարց** սկզբունքով: Շուրջ 1,5 միլիոն հայություն սրի քաշվեց, զոհ գնաց սովին ու հիվանդություններին: Դատարկվեց Արևմտյան Հայաստանը իր տոհմիկ ժողովրդից, իսկ ենիչերու արնածոր սրից ու արնախում հայացքից մազապուրծ հայերը սփռվեցին աշխարհե աշխարհ՝ սկիզբ տալով արդի հայոց սփյուռքին:

Սև տառերով գրվեց 1915 թվականը հայոց պատմության՝ սև խարանով դաջվելով մարդկության պատմության էջերում:

Հայկական կոտորածների մահասարսուռ օրերին շատերը չէ, որ առաքինություն և քաջություն ունեցան ընդվզել Աստծո և մարդկության դեմ գործվող ոճիրի դեմ, շատերը չէ, որ համարձակվեցին բողոքի արդար ձայն բարձրացնել ի պաշտպանություն իր հերկած ակոսում սրատվող, իր կերտած եկեղեցում այրվող, անապատներում սովահարվող, հայ և քրիստոնյա լինելու համար խաչվող ժողովրդի: Փոքրաթիվ ազնիվ այդ անհատների ցասումն ու զգաստացնող կոչը, որպես մարդկության տրոփող խղճի աղաղակ, խեղդվեց Առաջին աշխարհամարտի որոտներում, անարձագանք կորավ հզոր տերությունների մեծ քաղաքականության ոլորաններում: Մի՞թե մարդկությանը ևս մեկ աշխարհակործան պատերազմ էր պետք, ցեղասպանության նոր հնարք ու զոհ, որպեսզի սթափվեր և քայլ այլ քայլ անդրադառնար մարդու և ազգերի իրավունքների խնդիրներին:

Այսօր, երրորդ հազարամյակի շեմին, Հայոց Մեծ եղեռնից տասնամյակներ անց միայն, մի շարք պետություններ, նշանավոր պետական գործիչներ, գիտական շրջա-

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԱՆՄԱՐ ԿՐԱԿԻ ԱՌՋԵՎ

ԴԵՊԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ՝ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ

նակներ ու անհատներ ընդունում են քսաներորդ դարասկզբի Հայոց ցեղասպանության իրողությունը, սակայն դեռևս իր հաղթանակին է սպասում 1915 թ. եղեռնագործությունը դատապարտող համամարդկային արդարությունը: Արդարության այդ հաղթանակը անհրաժեշտ է ոչ միայն դժնդակ ու մահասարսուռ այդ օրերը ապրած մեր ժողովրդին, որ տասնամյակներ շարունակ միայնակ կրելով իր վշտի մորմոքը, անարդարությունից խոցված՝ ցավից կծկվել, սակայն վիրավոր հոգում, միևնույն է, չարին տեղ չի տվել: Հայոց ցեղասպանության դատապարտումը նույնքան անհրաժեշտ է բոլոր ժողովուրդներին, որ դարավոր երազ ունեն հաշտության, խաղաղության, փոխվստահության, բարի կամեցողության: Արդարև, մեր ժողովուրդը, որ աշխարհասփյուռ է և թվով առավել սփյուռքում, քան Հայրենիքում, չհաղթվեց չարից, այլ բարիով հաղթանակեց:

Սիրելի հավատավոր զավակներ Առաքելական մեր Մայր Եկեղեցու.

Արդարության հաղթանակի հավատով այսօր համայն հայությունը Մայր Հայրենիքում և հայոց սփյուռքում քայլում է դեպի Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող բյուր հուշակոթողներ՝ խորին խոնարհումով հարգանքի փուրք մատուցելու նահատակների սուրբ հիշատակին: Հոգեհանգստյան աղերսով այսօր զանգերն են հնչում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և բազմապատկվում աշխարհասփյուռ հայոց բոլոր եկեղեցիներում, բյուրավոր հայ հոգիներում, որ անմեղ զոհերի հիշատակի ոգեկոչումով կամրջվել են օվկիանից օվկիան, մայրցամաքից մայրցամաք: Այսօր, կանգնած Միածնաէջ Սուրբ Խորանի առջև, մեր հայացքը՝ Ծիծեռնակաբերդի կոթողված բարձունքին, որպես առաջին սպասավորը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, Մեր սրտաբուխ հայցն ենք վերառաքում առ Աստված՝ միախառնած այս պահին Տեր Զորի նահատակների նշխարներին խոնարհվող Մեր սիրեցյալ եղբոր՝ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի և համայն հայոց խնկաբույր աղոթքներին՝ հանուն նահատակ ու հարուցյալ մեր ժողովրդի:

Գոհություն և փառք Բարձրյալին, Արարատի փեշերին բազմած ազնվատունկ ազգս հայոց գտավ կենսահաղորդ ավիշը վերընձյուղվելու, կյանքին փարվելու և հինավուրց ու հարուստ իր ժառանգության ողջ հասակով, որպես փյունիկ նորահրաշ՝ հառնելու, հոգու ու մտքի նոր սլացքով արագընթաց 20-րդ դարի գիտությանն ու արվեստին հավասարազոր խոսք ասելու:

Փա՛ռք Երկնավորին, դարասկզբին բռնությամբ տեղահանված, տարագիր մեր նախնյաց սերունդներն այսօր արժանավոր և վստահություն վայելող քաղաքացիներն են իրենց հայրերին հյուրընկալած պետությունների, ուր վերակերտած ազգային իրենց կյանքը, քրիստոնեական-համամարդկային անանց արժեքներին ու հայրենյաց արմատներին հավատարիմ՝ շարունակում են հաչս աշխարհի ներկայացնել աշխատասեր հայի ստեղծարար ոգին ու կարողությունը:

Երիցս փա՛ռք մեր հայրերի Ամենազոր Աստծուն, Հայկյան ազատարար բազկի զորությամբ, Հարության հաղթական հավատով մահեր ոտնակոխած մեր ժողովուրդը եղեռնասկիզբ դարի ավարտին հայրենի սրբազան հողի վրա հաստատեց

ազատ ու անկախ իր պետականությունը և Վարդանանց ոգին բոցավառեց Արցախում՝ արդար իր իրավունքի պաշտպանությամբ:

Սիրելի և հարազատ ժողովուրդ հայոց.

Ամենայն Հայոց Հայրապետիս մաղթանքն է, որ դեպի Եղեռնի հուշարձանները առաջնորդող մեր ուղին վասն հայրենյաց, վասն հավատի ուխտի նորոգման ճանապարհ լինի մշտապես, զորացնելով մեզ միաբանելու ազգային մեր կյանքը, խաղաղ երկնքի ներքո շեն ու բարօր դարձնելու անկախ մեր Հայրենիքը, ուր խտացրել ենք պատկերը «կորուսյալ» մեր երկրի՝ Նոր Արաբկիրով, Նոր Խարբերդով, Նոր Զեյթունով, Նոր Կիլիկիայով, Նոր Մալաթիայով: Արդ, մենք, որ զորու եղանք վերքն ու ցավը արարող ուժի վերափոխել, գործենք ու կերտենք հայրենադարձության հայրենաշեն ոգով, որպեսզի երբեք չխոնարհվեն սրբության տաճարները մեր հողում, որպեսզի երբեք և ոչինչ այլևս չդարձնի մեզ աքսորական ու գաղթական, և խաղաղասեր ու ստեղծագործ ժողովուրդը մեր մշտապես չարին բարիով հաղթողի վստահությամբ, հավատով ու հույսով նայի գալիքին:

Թող Բարձրյալն Աստված ամենագութ իր Սիրով հանգստություն և խաղաղություն պարգևի լույս հոգիներին Հայոց Մեծ Եղեռնի անմեղ զոհերի, որ բանավոր պատարագ եղան Իր Սուրբ Սեղանին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի». ամեն: